

Որակի հոչակագիր **Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս**

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
0.2	Ոլորտը	Արտադրողների գներ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Բաժնի պետ Մարիամ Երիցյան Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին Հայաստանի Հանրապետություն, 0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք 3, Հեռախոս՝ +374 11 564 566 Էլ. Փոստ: mariam_yeritsyan@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Հիմնական նպատակն է տրամադրել արդիական տեղեկատվություն արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի (ԱԱԳԻ), այսինքն համեմատվող ժամանակաշրջաններում արդյունաբերողների արտադրանքի բացթողման գների (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկերի) վերաբերյալ: Ցուցանիշի հաշվառումը վարվում է 1988 թվականից:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, կենտրոնական բանկը, միջազգային կազմակերպությունները և այլն: Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը կիրառվում է ազգային հաշիվներում որպես դեֆլյատոր, ինչպես նաև արդյունաբերական արտադրանքի հաստատուն գներով ֆիզիկական ծավալի հաշվարկման համար:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշի կազմման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ամսական պարբերականությամբ հավաքվող տեղեկատվությունն է:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		

1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը ներկայացնում է արդյունաբերական արտադրանքի գների փոփոխությունը և արտացոլում է ընտրանքային կարգով ընտրված կազմակերպություններում, որոշակի ժամանակաշրջանի ընթացքում անփոփոխ բնութագրերով՝ արտադրված արտադրանք-ներկայացուցիչների հավաքակազմի գուտ գնային փոփոխությունը: Ժամանակագրական համադրելիության առումով արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսները (տոկոսներով) հաշվարկվում են հետևյալ կտրվածքներով՝</p> <ul style="list-style-type: none"> • հաշվետու ամիսը նախորդ ամսվա նկատմամբ, • հաշվետու ամիսը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, • հաշվետու ամիսը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, • աճողական կարգով (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, • հաշվետու ամիսը բազիսային տարվա նկատմամբ:
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Համակցություն</p> <p>ԱԱԳԻ-ի ինդեքսի հաշվարկման համար ընտրվում են արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք իրենց գործունեությունը ծավալում են ՀՀ տարածքում: Բազային կազմակերպությունների ընտրանքը, ինչը բնութագրում և արտացոլում է տվյալ տարածքի արդյունաբերական ճյուղերի ամբողջությունն ու յուրահատկությունը, կատարվում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ Արմստատ) կողմից:</p> <p>Ճյուղային ընդգրկունություն</p> <p>Հետազոտման համար ընտրվում են տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (այսուհետ՝ ՏԳՏՀԴ խմբ. 2) հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման (բաժին B), մշակող արդյունաբերության (բաժին C), էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման (բաժին D), ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման (բաժին E) բաժիններին համապատասխան տնտեսական գործունեություն իրականացնող առավել բնորոշ կազակերպությունները:</p> <p>ՏԳՏՀԴ խմբ. 2-ի 05, 06, 09, 19, 29, 39 հատվածները ներառված չեն ԱԱԳԻ-ի հաշվարկի մեջ այդ գործունեությունների կամ արտադրատեսակների արտադրության բացակայությամբ պայմանավորված:</p>

	<p>Աշխարհագրական ընդգրկունություն</p> <p>Ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը:</p> <p>Ապրանքի ընդգրկունություն</p> <p>Գների դիտարկման համար կազմակերպության կողմից արտադրատեսակներն ընտրվում են ելնելով հետևյալ սկզբունքներից.</p> <ul style="list-style-type: none">-արտադրատեսակի արտադրությունը նախատեսված պետք է լինի երկարատև ժամանակով,-արտադրատեսակը պետք է ներկայացուցչական լինի տվյալ կազմակերպության արտադրության ընդհանուր ծավալում: <p>Կազմակերպության կողմից ներկայացված (կամ ընտրված) ներկայացուցչական արտադրատեսակների գին և քանակ ցուցանիշների հիման վրա հաշվարկվող արտադրության ծավալների հանրագումարը պետք է կազմի տվյալ կազմակերպության թողարկած արտադրանքի ընդհանուր ծավալի առնվազն 60%-ը:</p> <p>Փոփոխականներ</p> <p><u>Գին.</u> հաշվետվության լրացման համար հիմք են հանդիսանում հաշվետու ժամանակաշրջանում արտադրանքի վերաբերյալ կամ արտադրանքի առաքման պայմանագրերով նախատեսված արտադրողի փաստացի բացթողման (շուկայական) գների մասին տեղեկություններն առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի, ներառյալ սուբսիդիաները,</p> <p><u>Ինդեքսներ.</u> Չուտ գնային փոփոխությունը արտացոլող ցուցանիշներ ժամանակի կամ տարածության մեջ:</p> <p><u>Կշիռների սկզբնաղբյուրներ.</u> Ինդեքսների ագրեգացման համար կշիռների սկզբնաղբյուր են հանդիսանում ճյուղային վիճակագրական հետազոտությունների արդյունքում ստացված արդյունաբերական արտադրանքի արժեքի ընդհանուր ծավալի մասին տվյալները:</p> <p>Վիճակագրական չափորոշիչներ</p> <p>Ինդեքսների ամենացածր մակարդակը 534 անվանում արտադրանքների (2485 արտադրանք-ներկայացուցիչների) գծով հաշվարկվում է որպես գների միջին երկրաչափական մեծությունների հարաբերակցություն: 534 տարրական ինդեքսները կշռվելով ագրեգացվում են ըստ SԳՏՀԴ խմբ. 2-ի:</p> <p>ՀՀ ԱԱԳԻ-ին հաշվարկվում է հաստատուն կշիռներով Լասպեյրեսի մոդիֆիկացված բանաձևով:</p> <p>Խմբավորումները</p>
--	---

		Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսները հրապարակվում են ըստ ՏԳՏՀԴ-ի խմբ.2-ի B, C, D, E բաժինների և ընդամենը ՀՀ-ի:
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամփոփ տարբերակով ամսական տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 25-րդ օրը, իսկ ընդարձակ տարբերակով՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը:
2.3	Ճշտապահություն	Վիճակագրական տվյալները որպես կանոն հրապարակվում են առանց ուշացումների, նախապես սահմանված ժամանակացույցին համապատասխան:
2.4	Հաճախականությունը	Ամսական
3. Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Գների մասին տեղեկատվությունը հավաքվում է ընտրանքային կարգով ընտրված 440 բազային կազմակերպություններից, 2485 արտադրանք-ներկայացուցիչների գծով, որից հաշվարկվում են մոտավորապես 534 անվանում արտադրանքների տարրական ինդեքսներ ըստ արտադրանքի դասակարգիչն ըստ գործունեության տեսակների (ԱԴԳՏ): Այնուհետև տարրական ինդեքսներն ագրեգացվում են ըստ ՏԳՏՀԴ խմբ. 2-ի, դաս մակարդակի մտավորապես 133 ենթաինդեքսներից սկսած:
3.2	Անճշտության աղբյուրները	Անճշտության աղբյուր կարող է լինել. <ul style="list-style-type: none"> • արտադրանք-ներկայացուցչի ընտրանքի անճշտությունը, քանի որ այն իրականացվում է բազային կազմակերպության կողմից, • արտադրանք-ներկայացուցչի որակական փոփոխությունը, • կազմակերպության կողմից ներկայցրած ոչ ճիշտ գնային տեղեկատվությունը, • տվյալների մուտքագրման ժամանակ, որոնք հնարվորինս ստուգվում և ճշգրտվում են:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ճշգրտության չափումներ չեն իրականացվում:
4. Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Ցուցանիշի հաշվառումը վարվում է 1988 թվականից: Տարիների ընթացքում կատարելագործվել են ԱԱԳԻ հաշվարկման մեթոդաբանությունը և կիրառվող դասակարգիչները: Մինչև 2009թ.-ը ցուցանիշը հաշվարկվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 2009-2010թթ. կիրառվել են տնտեսական

		գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ) խմբ.1.1-ը և արտադրանքի դասակարգիչն ըստ գործունեության տեսակների (ԱԴԳՏ): 2011թ.- ից գործածության մեջ են՝ ՏԳՏՀԴ խմբ. 2-ը և ԱԴԳՏ-2008-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Հայաստանի Հանրապետությունում հաշվարկվում է միայն մեկ աստադրողների գների ինդեքս, ուստի այն համադրելի չէ այլ գնային ինդեքսների հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հրապարակված տվյալներն համարվում են վերջնական: Դրանք կարող են ենթարկվել վերահաշվարկման միայն կշիռների փոփոխման (արդիականացման) դեպքում կամ տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների հիման վրա:
5. Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	<p>Հրապարակումներ</p> <p>Նորությունների թողարկում</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալները հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն):</p> <p>Ամսական, եռամսյակային հրապարակումներ</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական-ամսական, եռամսյակային զեկույց (հայերեն, ռուսերեն):</p> <p>Տարեկան հրապարակումներ</p> <p>«Գները և գների ինդեքսները ՀՀ-ում» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն)</p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն, անգլերեն):</p> <p>«Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն):</p> <p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն, անգլերեն, հետևյալ հասցեով http://www.armstat.am/am/?nid=82: Ամսական և պատմական տվյալները հասանելի են հայերեն, անգլերեն լեզուներով, հետևյալ հասցեով. https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6:</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում

		<p>են. Իրավաբանական անձանց համար.</p> <p>ա/ իրավաբանական անձի նույնականացման (իդենտիֆիկացիոն) ծածկագիրը բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը, ե/ իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), ինտերնետային կայքէջը, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը, զ/ գործունեության հիմնական տեսակը, է/ արտադրված արտադրատեսակի անվանումը, բնութագիրը, չափի միավորը, իրացման տեսակը, մեկ միավորի քանակը բնաիրային արտահայտությամբ, գինը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի):</p> <p>Անհատ ձեռնարկատերերի համար. ա/ անունը, ազգանունը, բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ բնակության վայրը ե/ պետական գրանցման վայրը (եթե չի համընկնում բնակության վայրի հետ), ինտերնետային կայքէջը, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը, զ/ գործունեության հիմնական տեսակը, է/ արտադրված արտադրատեսակի անվանումը, բնութագիրը, չափի միավորը, իրացման տեսակը, մեկ միավորի քանակը բնաիրային արտահայտությամբ, գինը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի):</p>
5.3	Փաստաթղթավորումը	<p>Մեթոդաբանության պարզաբանումները հասանելի են ԱՄՀ-ի պաշտոնական կայքի «Տվյալների Տարածման Հատուկ Ստանդարտ» կայքում՝ http://dsbb.imf.org/Pages/SDDS/CtyCtgList.aspx?ctycode=ARM, «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում,</p> <p>Էլեկտրոնային տարբերակով Արմստատի պաշտոնական կայքում՝ http://www.armstat.am/:</p>
5.4	Այլ տեղեկատվություն	<p>Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:</p>

6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթեր հասանելի չեն: